

ՀՀ ՎՁ մարզպետն ամփոփում է 2016թ. տարեկան գործունեության արդյունքները

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը 2016 թվականին շարունակել է համայնքային այցելությունները: Եղել է մարզի համայնքներում, տեղում ծանոթացել իրավիճակին: Այցելությունների շրջանակում համայնքի ավագանու, ակտիվ քաղաքացիների և համայնքային ենթակայությամբ գործող կազմակերպությունների ներկայացուցիչների հանդիպումներում վեր են հանվել հրատապ լուծում պահանջող համայնքային խնդիրները: Նշված խնդիրները քննարկվել են Վայոց ձորի մարզխորհրդի 2016 թվականին անցկացված չորս նիստերում: ՀՀ Վայոց ձորի մարզպետի մոտ քննարկվել է խոշորացվող համայնքների՝ Ջառիթափի, Վայքի, Ջերմուկի փնջերի բնակավայրերի խնդիրները: ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը մասնակցել է խոշորացված Ջերմուկ, Վայք և Ջառիթափ համայնքների ավագանու առաջին նիստերին(18.10.2016թ.)

Քննարկումներ են կազմակերպվել մարզի տարածքում խմելու և ոռոգման ջրի, էլեկրաէներգիայի անխափան մատակարարման, բնապահպանական և սպասարկման ծառայություններին առնչվող այլ խնդիրների շուրջ: 2016 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում մարզպետի մոտ ընդունելության են եկել մարզի տարբեր համայնքների շուրջ 1585քաղաքացիներ:

Հ. Սարգսյանը մասնակցել է նաև ՀՀ վարչապետի և ՀՀ ՏԿՁ նախարարի մոտ կազմակերպված ՀՀ մարզերին վերաբերող խնդիրներին նվիրված խորհրդակցություններին, քննարկված հարցերի շուրջ խորհրդակցություն է անցկացրել մարզպետարանում, ներկայացրել քննարկվող հարցերի շրջանակները, տվել համապատասխան հանձնարարականներ:

Հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է մարզում իրականացվող հոգևոր, կրթական, մշակութային, մարզական միջոցառումներին և տոնական օրերի կապակցությամբ ուղերձներով շնորհավորել մարզի բնակիչներին: Մեծ շուքով տոնական միջոցառումներ են կազմակերպվել նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 25-րդ տարեդարձին: Որպես կանոն մարզպետ Հ. Սարգսյանը յուրաքանչյուր ուսումնական տարվա մեկնարկին՝ սեպտեմբերի 1-ին՝ <<Գիտելիքի և դպրության օրը>> և ավարտին՝ <<Վերջին զանգ>>-ի օրը այցելում է մարզի սահմանամերձ և սահմանապահ համայնքների դպրոցներ: Մարզպետը մշտական ուշադրության կենտրոնում է պահել մարզային ենթակայությամբ կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների աշխատանքները՝ գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով: Համակարգել է համայնքների աշխատակազմերի, համայնքային ենթակայությամբ կրթական, մարզական և մշակութային հաստատությունների գործունեությունը:

2016 թվականի հոկտեմբերի 2-ին կազմակերպվել է խոշորացվող Ջերմուկ, Վայք, Ջառիթափ համայնքների, Եղեգնաձորի քաղաքային, 15 գյուղական համայնքների ղեկավարների և համայնքի ավագանու ընտրությունները, իսկ Գետափ, Ռինդ և Զիվա գյուղական համայնքներում միայն ավագանու ընտրությունները, որոնք եղել են ազատ-մրցակցային և անցել են առանց էական խախտումների և միջադեպերի:

Հաշվետու ժամանակահատվածում համակարգվել է ՀՀ գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը:

ՀՀ Վայոց ձորի մարզում անցկացվել է քննարկումներ նվիրված մարզի համայնքների զարգացման հնգամյա ծրագրերի կազմմանը և Վայոց ձորի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության մշակման ուղղություններին:

Ներհանրապետական հարաբերություններ:

2016 թվականի առաջին կիսամյակում կազմակերպվել է ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի, ՀՀ ՏԿՁ նախարարի, ՀՀ գյուղատնտեսության և ՏԿՁ փոխնախարարների այցերը Վայոց ձորի մարզ, իսկ երկրորդ կիսամյակի ընթացքում՝ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի, ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանի, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Գաբրիել Ղազարյանի այցերը ՀՀ Վայոց ձորի մարզ:

Արտաքին Հարաբերություններ

Մարզպետ Հարություն Սարգսյանը ՀՀ-ում հավատարմագրված դեսպանների հրավերով մասնակցել է դեսպանատներում իրականացված միջոցառումներին, ինչպես նաև հյուրընկալել է մարզ ժամանած օտարերկրյա դեսպանների:

Առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Բելառուսի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան՝ Ն.Գ. Իզոր Նազարուկին, ՌԴ Արխանգելսկի մարզի պատվիրակությունը, Արխանգելսկի մարզի նահանգապետ Իզոր Օռլովի գլխավորությամբ և Իրանի առողջապահության նախարարի տեղակալ Ռասոուլ Դինարվանդի գլխավորած պատվիրակությանը: Իսկ երկրորդ կիսամյակի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանն ընդունել է ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկուն, ՀՀ-ում ՌԴ դեսպան Իվան Վոլինկինին, հանդիպում է ունեցել ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային կազմակերպության ներկայացուցիչների հետ : Եղեգնաձորի մշակույթի կենտրոնում <<Հայաստանում Ռուսաստանի օրեր>> ծրագրի շրջանակում կազմակերպվել է համերգ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը ս/թ հոկտեմբերի 14-ին մասնակցել է հայ-ռուսական միջտարածարջանային համաժողովին և հանդես է եկել ելույթով: Ս/թ նոյեմբերի 2-ից 12-ը ՀՀԿ պատվիրակության կազմում եղել է Չինաստանի ժողովրդական Հանրապետությունում, որտեղ քննարկվել են երկու երկրների մարզերի, այդ թվում նաև Վայոց ձորի միջև հնարավոր համագործակցության հեռանկարները:

Բյուջետային հատկացումներ

2016 թվականի 22.12.2016թ-ի դրությամբ մարզին 22 ծրագրերով պետբյուջեից ֆինասավորումը կատարվել է 2531670.0 հազար դրամ, որից 1897670.4 հազար դրամ ծախսվել է կրթության ոլորտում:

Մշակույթի ոլորտին հատկացվել է 20752.1 հազար դրամ, որից պետական աջակցության մշակութային միջոցառումների իրականացման համար հատկացվել է 3400.0 հազար դրամ: Մարզի 44 համայնքների բյուջեներին ամրագրված սեփական եկամուտների հավաքագրումը 22.12.2016թ-ի դրությամբ կատարվել է 96.2 %-ով: ՀՀ 2016 թվականի 22.12.2016թ-ի դրությամբ պետական բյուջեից համայնքների հատկացված դոտացիան եղել է 954159.8 հազ. դրամ: Ֆինանսավորվել է 100 %-ով: ՀՀ Կառավարության որոշմամբ 2016 թվականի ընթացքում փոխհատուցվել է մարզի սահմանամերձ Բարձրունի, Խաչիկ, Խնձորուտ, Նոր Ազնաբերդ և Սերս համայնքների էլեկտրաէներգիա սպառող բնակիչ-բաժանորդների կողմից հաշվարկային տարում գումարային մինչև 1440 կվտ/ժ էլեկտրաէներգիայի քանակությունների համար 100% չափով: Քանզի նշված համայնքները գազաֆիկացված չեն, գազի գնի համար նախատեսված գումարը փոխանցվում է որպես էլ.էներգիայի վարձավճար, յուրաքանչյուր բաժանորդին փոխհատուցելով 180 խոր/մ ծախսած գազի համարժեք գումարի չափով: 2016թ-ի ընթացքում փոխհատուցվել է 27034.6 հազ. դրամ, բնական գազի և էլեկտրաէներգիայի գումար: Գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման նպատակով հատկացվել է 3154.9 հազ. դրամ, որը ֆինանսավորվել 100%-ով:

Կրթություն

Վայոց ձորի մարզում գործում է 50 հանրակրթական դպրոց, այդ թվում 14 հիմնական և 36 միջնակարգ, որոնցից 2-ը վարժարան: 2 ավագ դպրոց և 1 կրթահամալիր գործում են ՀՀ ԿԳ նախարարության ենթակայությամբ: Մարզում գործում է տարածաշրջանային պետական քոլեջ և ՏՆտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղը:

Մարզում հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան: Կրթության վարչությունը սերտորեն համագործակցում է իրավապահ մարմինների, մարզպետարանի կանանց, ընտանիքի և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի հետ: Կատարված աշխատանքի արդյունքում խիստ նվազել է անչափահասների կողմից կատարվող իրավախախտումները: Ոստիկանության կողմից հաշվառման վերցված երեխաներ չկան:

Մարզի 50 դպրոցներում 2016-2017 ուստարում սովորում է 6322 աշակերտ, որից 685-ը ավագ դպրոցներում և կրթահամալիրում: Առաջին դասարան են ընդունվել 633 երեխա, այդ թվում կրթության

առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 88 դպրոցահասակ երեխաներ: Բացվել և գործում են 24 նախակրթարաններ, որոնցից 14-ը դպրոցներում: Դպրոցներում գործող նախակրթարաններում ընդգրկվել է 165 երեխա:

Դպրոցներում աշխատում են 973 ուսուցիչներ, որոնցից 851-ը ունեն բարձրագույն մանկավարժական, կամ բարձրագույն կրթություն (մոտ 87%-ը), մնացած 122-ը՝ միջնակարգ մասնագիտական:

Սարգի հանրակրթական դպրոցների մեծ մասը՝ մոտ 80%, վերանորոգված են: Բոլոր դպրոցներում լուծված է ջեռուցման խնդիրը:

Սպորտ

Սարգում գործում է 4 մանկապատանեկան մարզադպրոց (Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ, Մալիշկա)՝ բոլորն էլ համայնքային ենթակայության: Սարգի 50 դպրոցներից 11-ում չկան մարզադահլիճներ: Մարզադպրոցներն ու հանրակրթական բոլոր դպրոցներն ունեն մարզագույքի կարիք:

Մ Շ Ա Կ ՈՒ Յ Թ

Սարգում կա 36 մշակույթի տուն, մեկը մարզային ենթակայության, 35-ը համայնքային ենթակայության, որոնք խիստ վերանորոգման կարիք ունեն:

Սարգում կա 41 գրադարան, Եղեգնաձորի մարզային գրադարանը մշակույթի նախարարության ենթակայության է, վերանորոգված է: Մնացած բոլոր համայնքային գրադարանները խիստ վերանորոգման կարիք ունեն: Գործում են երաժշտական, արվեստի և գեղարվեստի 6 դպրոցներ, որոնցից 1-ը մարզային ենթակայության, մնացածը՝ համայնքային: Գործում է 3 թանգարան և 2 պատկերասրահ: Սարգի տարածքում հաշվառված են 1320 պատմա-մշակութային հուշարձաններ:

Առողջապահություն

Սարգային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար 2016թ.-ի հատկացվել է 607 496.2 հազար դրամ: Մատուցվել է 38 699.7 հազար դրամի վճարովի բժշկական ծառայություններ:

-2016թ. Վայքի բուժական միավորումն ՓԲԸ-ում սկսել է գործել հենողիալիզի բաժանմունքը, որը սպասարկում է մարզի 9 բնակչի:

- 2016թ. հունիսի 13-ից 25-ը իրականացվել է Հայկական ակնաբուժության նախագծի (ՀԱՆ) և Ucom ընկերության կողմից համատեղ իրականացվող ,Լույս հայի աչքերինե 2016 թվականի ծրագիրը: Ակնային զննում անցածներից 133-ը ծրագրի շրջանակում ենթարկվել են վիրահատության, իսկ 38-ը՝ լազերային միջամտության: ՀՀ Վայոց ձորի մարզպետի միջամտությամբ ծրագրի շրջանակում վիրահատության են ենթարկվել նաև մարզի սոցիալապես անապահով ընտանիքների ևս 15 բնակիչ:

- 2016թ.-ին պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզպետի միջնորդագրով հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 30 քաղաքացի, պետական պատվերով բուժման համար 6 քաղաքացի մարզպետի կողմից ուղեգրվել են մարզի բուժհաստատություններ:

- Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 60 մեծահասակ և 4 երեխա:

Սոցապահովության

Ձեռնարկվել է համապատասխան միջոցառումներ նպաստի համակարգին պետական բյուջեից հատկացվող միջոցների հասցեականության պահպանման և նպատակային օգտագործման ուղղությամբ: Արդյունքում Հանրապետությունում նպաստառու ընտանիքների միջին թիվը կազմել է 13.4%, իսկ մարզում 11.4%:

Ճանապարհաշինություն

2016 թ. ընթացքում իրականացվել է 139.9կմ մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման աշխատանքներ, իսկ 37.5 կմ ընթացիկ պահպանման աշխատանքներ: ԴՅ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ հիմնանորոգվել է Չիվա-Ռինդ մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհի 2.2 կմ հատվածը՝ 204 մլն դրամի չափով, Արենի- Խաչիկ ավտոճանապարհի 3 ոլորանները՝ 79 մլն դրամի չափով, Մ2 Երևան- Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման ավտոճանապարհի կմ 159+200 հատվածի կամրուջը՝ 23.8 մլն դրամի չափով, Գնդեվազ բնակավայրի ներհամայնքային փողոցները՝ 88,9 մլն դրամի չափով, վերնորոգվել է Ջերմուկ քաղաքի գործարանային փողոցը և հարակից մայթերը՝ 59.9 մլն դրամի չափով և բարեկարգվել է Վարդահովիտի ներհամայնքային փողոցները՝ 15 մլն դրամի չափով(տրվել է սուբվենցիա Վարդահովիտի համայնքին):

Քաղաքաշինություն

2016թ-ի ընթացքում ԴԴ պետական բյուջեի միջոցներով մարզպետարանի պատվիրատվությամբ կատարվել է 130.187 մլն. դրամի շին.մոնտաժային աշխատանքներ Ջերմուկ քաղաքի Արփա գետի կիրճի հետիոտն ճեմուղու վերակառուցում և բարեկարգում:

ԴԴ պետական բյուջեի միջոցներով Վայքի քաղաքապետարանի պատվիրատվությամբ իրականացվել են <<Արևիկ>> մարզադաշտի հիմնանորոգման (60.0 մլն. դրամ), Մարզադաշտին կից այգու բարեկարգման (60.0 մլն. դրամ)աշխատանքները :

Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ պետական հիմնարկության միջոցներով Մալիշկա, Արենի,Վերնաշեն, Գետափ, Ելփին, Արին, Ազատեկ, Ռինդ, Դերիեր, Գոմք համայնքներում իրականացվել են ոռոգման և խմելու ջրագծերի կերակառուցման, գազաֆիկացման ընդլայնման աշխատանքներ, ընդամենը 1557.85 մլն. դրամ:

Գյուղ նախարարության ԾԻԳ ՊԴ-ի միջոցներով իրականացվել է՝Աղնջաձոր և Ռինդ համայնքների արոտավայրերում ջրաբիացման համակարգի կառուցում, ընդամենը՝ 106.4 մլն. դրամ :

Վերջին օրերի սրբեր բարեգործական կորպորացիայի միջոցներով իրականացվել է՝

Ռինդ և Խնձորուտում համայնքների խմելու ջրագծերի վերանորոգում, ընդ՝ 10.352 մլն. դրամ:

<<Ֆուլեր տնաշինական կենտրոն>> ԲԴԿ-ի միջոցներով իրականացվել է՝

Շատին, Թառաթումբ, Դորս, Քարագլուխ, Մարտիրոս, Սերս, Գոմք, Կեչուտ, Սարավան, Արտավան, Չիվա, Աղավնաձոր համայնքների արոտավայրերում խմոցների տեղադրում, Գնդեվազ և Ջառիթափ համայնքներում կաթի հավաքման կետի, իսկ Աղավնաձոր համայնքում չրի արտադրամասի կառուցում՝ ընդհանուր գումարը՝ 157.346 մլն. դրամ:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով իրականացվել էՋառիթափ համայնքի մանկապարտեզի շենքի հիմնանորոգում, գումարը՝ 145.0 մլն. դրամ:

Համայնքային բյուջեի միջոցներով իրականացվել է՝

Գնդեվազ համայնքում ոռոգման ջրագծի վերակառուցում- 120.5 մլն. դրամ, Գոմք համայնքի անասունների համար բակատեղերի կառուցում – 1.86 մլն. դրամ, Գետափ համայնքում հենապատի կառուցում – 0.96 մլն. դրամ և գազիֆիկացման ընդլայնում 2.3 մլն. դրամ, ընդ՝ – 125.62 մլն. դրամ:

Բնության համաշխարային հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի միջոցներով իրականացվել է Եղեգնաձոր համայնքի այցելությունների կենտրոնի կառուցում -32.447 մլն. դրամ, Գետափում մրգի արևային չորանոցի կառուցում – 20.0 մլն. դրամ, ընդ՝ – 52.447 մլն. դրամ:

ՕՔՍՖԱՍ - ի միջոցներով Գնիշիկ համայնքում ոռոգման ջրագծի կառուցում՝ – 18.0 մլն. դրամ:

Ասիական զարգացման բանկի միջոցներով իրականացվել են՝ Ջերմուկ քաղաքի ջրամատակարարման բարելավման աշխատանքները – 31.0 մլն. դրամ և Ջառիթափում ջրամատակարարման բարելավման աշխատանքները – 36.5 մլն. դրամ: Ընդ`-67.5 մլն. դրամ:

Հաբիթաթ Ֆոր Հյուսնեմիթի Արմենիա հիմնադրամի միջոցներով իրականացվել է՝

Վայք քաղաքի 5 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման և էներգաարդյունավետության բարելավման միջոցառումների իրականացում – 22.419 մլն. դրամ: Ընդամենը 22.419 մլն. դրամ:

2016 թվականի ընթացքում ընդամենը մարզում իրականացվել է 2513.121 մլն. դրամի աշխատանքներ:

Գյուղատնտեսություն

Մարզում գյուղատնտեսության զարգացման նպատակով 2016 թվականին պետական աջակցության ծրագրերով շուկայականից ցածր գներով մարզի հողօգտագործողներին հատկացվել է 459.85տ ազոտական, 5.75տ կալիումական, 4.0տ ֆոսֆորական պարարտանյութեր, 64150լ դիզելային վառելանյութ, 81տ գարնանացան գարու, 0.5տ առվույտի և 104տ աշնանացան ցորենի սերմացուներ: Աշնանացան ցորենի դիմաց վճարման ենթակա 16 640 000 դրամից վճարվել է 11 702 140 դրամ, պարտքը կազմում է 4 937 860 դրամ:

Չմռան և վաղ գարնանային ցրտահարությունների պատճառով վնասվել են մարզի խաղողի ու պտղատու այգիները, վնասը կազմել է 1 301 000 000 դրամ: Գործող 6 հակակարկտային կայանները բավարար չեն կարկտահարության դեմ պայքարի համար, անհրաժեշտ են ևս 20 կայաններ կարկտահարության վնասները մեղմելու նպատակով:

2016 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ACBA-CREDIT AGRIKOLE բանկի միջոցով մարզի 814 գյուղացիական տնտեսություններին տրվել է շուրջ 651 600 000 դրամ սուբսիդավորված վարկեր 14% տոկոսադրույքով, որից 6%-ը սուբսիդավորվել է պետության կողմից, 154 տնտեսությունների տրվել է 126 640 000 դրամ գյուղացիական վարկ 13.5-20% տոկոսադրույքով և 142 գյուղացիական տնտեսությունների տրվել է 315 170 դոլար վարկ 14-24% տոկոսադրույքով: 2016 հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է 25026 գլուխ խոշոր եղջերավոր անասուն/+2448/, որից կովեր` 9861 /+218/ գլուխ, մանր եղջերավոր` 21691 (-3133), խոզեր` 2627 գլուխ (+578), թռչուններ` 116557 թև (-22882) և մեղվաընտանիք` 22570/+715/ փեթակ:

Եղեգնաձորի պահածոների գործարանի արտադրական հզորությունները թույլ են տալիս տարեկան մթերել շուրջ 1600տ. պտուղ-բանջարեղեն:Վերջինիս կողմից մթերվել է 38 տոննա պտուղ, 582 տոննա բանջարեղեն, իսկ արտադրված 1978 տոննա խաղողից, վերանշակող ձեռնարկությունների կողմից մթերվել է 1604 տոննա:

Անասնաբուժության ռազմավարական զարգացման շվեցարական գրասենյակի կողմից մարզի մի շարք համայնքներում ստեղծվել են անասնաբուժական կետեր, ամեն կետի համար գնվել է մեկ միլիոն դրամի դեղորայք և գործիքներ, և 300 000 դրամի գույք: Ընթացքի մեջ է Ելփին, Վայք, Գնդեվազ և Գլաձոր համայնքներում Արիեստական սերմնավորման կետերի կազմավորումը:

Գրասենյակի կողմից իրականացվում է նաև համակարգչային ուսուցում համայնքներին ծրագիրը Կեչուտ, Գնիշիկ, Աղնջաձոր և Վարդահովիտ համայնքներում: Գյուղապետարանների աշխատակիցներին ուսուցումն ավարտելուց հետո կտրամադրվեն համակարգիչներ:

Մարզում ,Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցու-նա-կության ծրագրի շրջանակներում ընդգրկվել են Աղնջաձոր, Ռինդ, Վերնաշեն, Ջառիթափ Սարավան, Կարմրաշեն, Շատին, Արտաբույնք համայնքները, ծրագրի միջոցով Աղնջաձոր և Կարմրաշեն համայնքները ձեռք են բերել մեկական ՄՏՁ-82 տրակտոր, իրենց գյուղ գործիքներով /20% համայնքի միջոցներով/:

Մարզում առկա է 424 միավոր գյուղ տեխնիկա, որից սարքին` 301-ը, 71 վարի տրակտոր, 23 կոմբայն: 2014-2016թթ ձեռք է բերվել 11 միավոր գյուղ տեխնիկա, 18 միավոր գյուղ. գործիքներ: 2016թ.մարզի ընդհանուր ցանքային տարածությունը կազմել է 6851 հա, որը նախորդ տարվա համեմատ ավել է 1138 հա-ով:

Հողաշինության և հողօգտագործման բնագավառ

Հաշվետու ժամանակաշրջանում կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, ըստ որի մարզի վարչական տարածքը կազմում է 230783.0 հա, որից գյուղ. նշանակության հողեր` 190314.2 հա, այդ թվում վարելահող` 15942.6 հա, բազմամյա տնկարքեր` 1684.6 հա, խոտհարքեր` 5014.3 հա, արոտ` 92275.2 հա, այլ հողատեսքեր 75397.6հա: Համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալությամբ տրամադրման աշխատանքները իրականացվել են` ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան: Համայնքների վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից օտարվել է 53.5578 հա, որի ընդհանուր գումարը կազմում է 13748927.6 դրամ, որը հիմնականում ծախսվել է կապիտալ ակտիվների ձեռքբերման և շենքեր-շինությունների վերանորոգման համար:

Մարզի հողերի օգտագործման մակարդակը դեռևս բավարար չէ, որի հիմնական պատճառներն են` վարելահողերի 78 % -ը անջրդի են, հողերը բնական ցածր բերրիություն ունեն, բնակավայրերից հեռու են գտնվում:

Արդյունաբերություն

2016թ. 10 ամիսների ընթացքում Վայոց ձորի մարզում, ըստ կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ընթացիկ զներով) թողարկվել է 14.9 մլրդ. դրամի արդյունա-բե-րա-կան արտադրանք, իրացվել է 15.1 մլրդ. դրամի արտադրանք, աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 0.1 % :
-Հիմնականում աճը ապահովվել է էլ էներգիայի, հանքային ջրերի, խմիչքների և հանքաարդյունաբերության ծավալների աճով:

Մարզպետարանը մարզի գործարարներին, ձեռներեցներին աջակցել է թողարկվող արտադրանքի գովազդման, հանրապետական և միջազգային ցուցահանդեսներում նրանց մասնակցության ապահովման ուղղությամբ:

-Մարզում գործարարության աշխուժացման նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի մշտական ուշադրության կենտրոնում է գտնվում բազմակողմանի համագործակցային հարաբերությունների զարգացումն ու խորացումը հետևյալ պետությունների հետ` Իրանի Իսլամական Հանրապետության (Ուրմիա նահանգ), ՌԴ (Նիժնի-Նովգորոդի, Արխանգելսկի մարզ), Բելոռուսիայի Հանրապետության (Մինսկի մարզ):

Ջրոսաշրջություն

Ջրոսաշրջությունը Վայոց ձորի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Մարզում առկա է 1320 պատմամշակութային հուշարձաններ` տարածված 29 համայնքներում: Վայոց ձորի մարզում կարելի է առաջադրել զբոսաշրջության հետևյալ ուղղությունները` էկոտուրիզմ, գիտական տուրիզմ, բնական տուրիզմ, արկածային տուրիզմ (ժայռամագլցումներ. անձավագիտական տուրեր, լեռնային և հետիոտն երթեր, ծիավորություն լեռնային տարածքներով, կանյոնինգ, ձկնորսություն), պատմամշակութային տուրիզմ: 2015 թվականի առաջին 10 ամիսների համեմատ 2016 թվականի նույն ժամանակահատվածում մարզ ժամանած զբոսաշրջիկների թիվն ավելացել է 105-ով կամ 0.13%-ով:

Հանրային իրազեկում

ՀՀ ՎՁ մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժինը 2016 թվականի հունիսի 28-ին կազմակերպել է ՀՀ Վայոց ձորի մարզպետի ասուլիսը,

նվիրված 2016 թվականի 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփմանը, իսկ դեկտեմբերի 26-ին՝ 2016 թվականի տարեկան արդյունքների:

Մարզում չեն գործում տեղեկան հեռուստա և ռադիոհաղորդումներ ընկերություններ: 2016 թվականի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետի և մարզպետարանի աշխատանքային գործունեության հանրային իրազեկումը մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնը կազմակերպել է մարզպետարանի պաշտոնական կայքի միջոցով՝ <<Նորություններ>> բաժնում տեղադրելով 332 լուսաբանական նյութ և սպասարկելով կայքի 23 բաժինների 127 ենթաբաժինները: ՏՀԿ բաժինը համագործակցում է Հայաստանի Հանրապետություն օրաթերթի, մարզային <<Վարդաձոր>>, <<Ագրոկամուրջ>>, ամսաթերթերի, Վայոց ձորի թեմի պաշտոնական կայքի և ինչպես նաև մարզում ակտիվորեն գործող հասարակական կազմակերպությունների հետ: ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքը՝ <http://vdzor.mtad.am/> Ինֆորմացիայի ազատության կենտրոնի (ԻԱԿ) կողմից ճանաչվել է 2016 թվականին տեղեկատվության տրամադրման լավագույն ինտերնետային պաշտոնական կայք:

Մարզի 29 համայնքներից 21-ուն ներդրված է ՀԿՏՀ (Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ), 13 համայնքներում գործում են պաշտոնական կայքեր: